# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

1. **«ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-22/06/Շ»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

| | |
|---|---|
| Պատվիրատու | «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ |
| Պատվիրատուի հասցեն | ՀՀ. ք.Երևան, Զաքիյան 10 |
| Ընթացակարգի ծածկագիրը | **«ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-22/06/Շ»** |
| Գնման առարկայի անվանումը | ***"Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ»*** |
| Նիստի անցկացման վայրը | «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ ՀՀ.ք.Երևան, Զաքիյան 10 |
| Նիստի անցկացման օրը և ժամը | 28.02.2022թ ժ 11.00 |
| Նիստին ներկա հանձնաժողովի կազմ | **Գնահատող հանձնաժողովի նախագահ** |
| | *-Վարշամ Կարապետյան՝ Ֆինանսատնտեսական աշխատանքների գծով Գլխավոր տնօրենի տեղակալ* |
| | **Գնահատող հանձնաժողովի անդամներ** |
| | *-Հովհաննես Պողոսյան՝ Շենքերի սպասարկման բաժնի պետի տեղակալ* |
| | *-Անի Հարությունյան՝ Շենքերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ* |
| | *-Ալբինա Կիրակոսյան՝ Շենքերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ* |
| Գնումների համակարգող | Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետի տեղակալ Արմինե Միրումյան |

2. **Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը**՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 23-րդ կետի 2-րդ ենթակետը

3. **Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը՝** հրավերը 2022թ. փետրվարի 21-ին հրապարակվել է ՀՀ Ֆինանսների նախարարության Պետական գնումների պաշտոնական ինտերնետային կայքում

4. **Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները՝** մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել որևէ հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ:

5. Հայտերը ներկայացվել են թղթային տարբերակով, բացվել են «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում, ք.Երևան, Զաքիյան 10 հասցեով թիվ 15 սենյակում, 2022թ փետրվարի 28-ին, ժամը 11. 00 ին

**Ընդունել ի գիտություն, որ հայտ է ներկայացրել հետևյալ 1 /մեկ/ մասնակից**

| N | Անվանում | ՀՎՀՀ | Հասցե | Հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | 08914874 | ՀՀ, Վայոց ձոր, Արենի փող.14տուն19, | Հեռ 055504093 | sienergy@yahoo.com |

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

*6.Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին*

**6.1 «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճենից:

*7 .Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.*

7.1 **«ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ -ի** կողմից ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

*8 Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման վերաբերյալ*

8.1 «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ –ի ներկայացրած հայտը գնահատվել է բավարար:

*9 Տվյալներ մասնակիցների առաջարկած գների վերաբերյալ*

9.1 «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

| Չափա-բաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | «Տեսահսկման համակարգի պահպանման ծառայություններ» | 1 000 000 / մեկ միլիոն / | - | 1 000 000 / մեկ միլիոն / |
| 2 | « Ավտոմատացված անցագրային համակարգի պահպանման ծառայություններ» | 540 000/ հինգ հարյուր քառասուն հազար/ | | 540 000/ հինգ հարյուր քառասուն հազար/ |
| 3 | « Ավտոմատացված անցագրային համակարգի պահպանման ծառայություններ» | 480 000 /չորս հարյուր ութսուն հազար / | | 480 000 /չորս հարյուր ութսուն հազար / |

**Հաշվի առնելով, որ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով հանձնաժողովը որոշեց**

***ՈՐՈՇՈՒՄ 2***

Ընտրված մասնակցին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստին ներկա և հայտ ներկայացրած միակ մասնակցի «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ -ի հետ բանակցել գների նվազեցման շուրջ :
**Ընդունել ի գիտություն, որ բանակցությունների արդյունքում մասնակցի առաջարկած գինը 2-րդ և 3-րդ չափաբաժիններում նվազել է:**

*10 Տվյալներ բանակցությունների արդյունքում մասնակիցների առաջարկած գների վերաբերյալ*

10.1 «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

| Չափա-բաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | «Տեսահսկման համակարգի պահպանման ծառայություններ» | 1 000 000 / մեկ միլիոն / | - | 1 000 000 / մեկ միլիոն / |
| 2 | « Ավտոմատացված անցագրային համակարգի պահպանման ծառայություններ» | 520 000/ հինգ հարյուր քսան հազար/ | | 520 000/ հինգ հարյուր քսան հազար/ |
| 3 | « Ավտոմատացված անցագրային համակարգի պահպանման ծառայություններ» | 460 000 /չորս հարյուր վաթսուն հազար / | | 460 000 /չորս հարյուր վաթսուն հազար / |

**Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով հանձնաժողովը որոշեց**

***ՈՐՈՇՈՒՄ 3***

**4.1 «ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-22/06/Շ» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-3 չափաբաժիններում ընտրված մասնակից ճանաչել «ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող և հայտ ներկայացրած միակ մասնակից և կնքել պայմանագիր:**

**4.2** Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ :

4.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել ներկայացնելով պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

**Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:**

---

*Գնահատող հանձնաժողովի քարտուղարին*

---

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից, ինչպես նաև գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում.

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում:

3) Ընտրված մասնակցի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու Դիմում-հայտարարությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը հրապարակել տեղեկագրում:

4) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար **"Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների"** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-22/06/Շ»** ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում **«ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հետ** պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Պետական գնումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու համար:

5) Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել ներկայացնելով պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ֆինանսատնտեսական աշխատանքների գծով Գլխավոր տնօրենի տեղակալ — Վ.Կարապետյան----------------------

**Անդամներ՝**

շենքերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ — Հ.Պողոսյան ----------------------------

շենքերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ — Ա. Հարությունյան-----------------------

շենքերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ — Ա. Կիրակոսյան --------------------------

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետի տեղակալ՝ — Ա.Միրումյան --------------